Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 2

Հանրապետական եռակողմ հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստի

2015 թվական, մայիսի 18, ժամը՝ 11:00

Նախագահում էր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանը

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամներ՝

Սոնա Հարությունյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Էմիլ Տարասյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Նորայր Բալայան	ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի համակարգի իրավական ապահովման վարչության պետ
Բորիս Խարատյան	Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահի տեղակալ
Շմավոն Մկրտչյան	Առևտրի, հասարակական սննդի, սպառկոոպերացիայի և ձեռներեցության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Կարինե Ալոյան	«Էլեկտրաարհմիություն» արհեստակցական կազմակերպությունների ճյուղային միության նախագահ
Ժանետա Թորոսյան	Մշակույթի և ԶԼՄ-ների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Համլետ Դանիելյան	Հայաստանի արդյունաբերության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ

03 06 20 15
16915-15
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի

Գագիկ Մակարյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ
Շուշանիկ Բարսեղյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահի տեղակալ-սոցիալական գործընկերության հարցերով փորձագետ
Պողոս Գաբրիելյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության Արագածոտնի տարածքային միության նախագահ

Հրավիրվածներ՝

Արայիկ Պետրոսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի առաջին տեղակալ
Նարինե Բալայան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի խորհրդական
Գեղամ Իսրայելյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի օգնական
Թադևոս Ավետիսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության պետ
Նազիկ Նազարյան	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի հաշվետվությունների ուսումնասիրության բաժնի պետ
Գայանե Մանուկյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետ
Կարինե Մադոյան	Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի աշխատակազմի սոցիալ-տնտեսագիտական և աշխատանքի պաշտպանության բաժնի պետ

Հանձնաժողովի քարտուղար՝

Արփինե Սարգսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության աշխատանքի բաժնի գլխավոր մասնագետ

Բացակայում էին՝

Հանձնաժողովի անդամներ

Էդուարդ Կիրակոսյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության «Տաքսի ծառայությունների ասոցիացիա» ճյուղային միության գործադիր տնօրեն
Սուրեն Չիբուխչյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության «Արմենպակ» ճյուղային միության նախագահ

Հանձնաժողովի նախագահի կողմից հարց բարձրացվեց, թե արդյոք կան նիստի՝ նախապես ուղարկված օրակարգի նախագծի հետ կապված հարցեր կամ առաջարկներ:

Հանձնաժողովի անդամների կողմից նշվեց, որ օրակարգի նախագծի հետ կապված հարցեր չկան և առաջարկվեց հաստատել նիստի օրակարգը նախապես ուղարկված հարցով.

1. Հանրապետական նոր կոլեկտիվ պայմանագրի նախագծի ներկայացում և քննարկում:

Հանձնաժողովի նախագահի կողմից առաջարկվեց, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանրապետական նոր կոլեկտիվ պայմանագրի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ) նախապես ուղարկված է եղել Հանձնաժողովի անդամներին, քննարկվեն Նախագծի բաժիններն առանձին-առանձին և առաջարկություններ ունենալու դեպքում Հանձնաժողովի անդամների կողմից ներկայացվեն դրանք:

Նախագծի նախաբան

Նախագծի նախաբանի քննարկման ժամանակ Բ. Խարատյանի կողմից առաջարկվեց հստակեցնել նախաբանի 5-րդ պարբերությունում օգտագործվող «էական» բառը կամ հանել այն:

Այս առումով Հանձնաժողովի անդամների, ինչպես նաև Թ. Ավետիսյանի կողմից նշվեց, որ նշված բառը հանելու դեպքում կստացվի այնպես, որ աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող բոլոր նորմատիվ իրավական ակտերի նախագծերը հարկ կլինի ներկայացնել Հանձնաժողովի կարծիքին՝ մինչև համապատասխան մարմնի կողմից դրանց ընդունումը, ինչը գործնականում անիրատեսական է և ոչ նպատակահարմար:

Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանի կողմից առաջարկվեց «էական» բառի բացվածքը տալ Հանձնաժողովի աշխատակարգում:

Հանձնաժողովի Նախագահի առաջարկությունն ընդունվեց Հանձնաժողովի նիստին ներկա բոլոր անդամների կողմից:

Հանձնաժողովի անդամ Նորայր Բալայանի կողմից առաջարկվեց,

Նախաբանի 5-րդ պարբերությունը «ընդունումը:» բառից հետո լրացնել հետևյալ նախադասությամբ.

«Հանձնաժողովի կարծիքը ստանալուց հետո նախագծերը ուղարկվում են պետական իրավական փորձաքննության, բացառությամբ օպերատիվ կարգով որոշումների ընդունում պահանջող նախագծերի:»:

Ն. Բալայանի առաջարկն ընդունվեց Հանձնաժողովի կողմից:

Շ. Մկրտչյանի կողմից առաջարկվեց Նախաբանի վերջին պարբերությունում «կնպաստեն» բառը փոխարինել «կաջակցեն» բառով: Նշված առաջարկությունը նույնպես ընդունվեց Հանձնաժողովի նիստին ներկա բոլոր անդամների կողմից:

Նախագծի 1-ին բաժին.

Նախագծի 1-ին բաժնի շրջանակներում Հանձնաժողովի անդամների կողմից բարձրացվեցին հետևյալ հարցերը.

Ն. Նազարյանի կողմից բարձրացվեց այն հարցը, թե ինչ պետք է հասկանալ Նախագծի 1.5-րդ կետի տակ:

Հանձնաժողովի նախագահի և Հանձնաժողովի անդամների կողմից նշվեց, որ աշխատողների առողջության և անվտանգության պահպանման հարցերով զբաղվող հանձնաժողովների ստեղծման պահանջն ամրագրված է ՀՀ կառավարության որոշմամբ:

Ս. Հարությունյանի կողմից հարց բարձրացվեց այն մասին, թե ինչպես են իրականացվելու 1-ին բաժնի 1.3-րդ և 1.4-րդ կետերով նախատեսված միջոցառումները:

Բարձրացված հարցի կապակցությամբ Թ. Ավետիսյանի կողմից պարզաբանվեց, որ մշակվել և շրջանառության է դրվել ՀՀ առողջապահական պետական տեսչության կանոնադրությունում փոփոխությունների և լրացումների նախագիծ, որով նախատեսվում է, որ աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ առողջապահական պետական տեսչության կողմից:

Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանի կողմից նշվեց, որ նոր ստեղծվող Հանձնաժողովի կազմում ընդգրկվելու է նաև ՀՀ առողջապահության նախարարության

ներկայացուցիչ, իսկ նիստերի ժամանակ անդրադարձ կկատարվի նաև ՀՀ առողջապահական պետական տեսչության կողմից իրականացվող գործունեությանը:

Նախագծի 2-րդ բաժին.

Ժ. Թորոսյանի կողմից առաջարկվեց 2.7-րդ կետում նշված ձևակերպումը տալ առավել հստակ՝ գրելով կոնկրետ միջոցառում:

Է. Տարասյանի կողմից այս առումով արտահայտվեց այն տեսակետը, որ ըստ էության, Հանձնաժողովը իրավական ակտի նախագիծ մշակող մարմին չէ, այլ այն կարող է հանդես գալ նման իրավական ակտի նախագիծ մշակելու առաջարկությամբ: Ուստի նրա կարծիքով ճիշտ է 2.7-րդ կետը մնա նույն ձևակերպմամբ:

Նշված հարցի քննարկման արդյունքում Հանձնաժողովը որոշեց, որ Նախագծում առավել տեղին է ներկայացված ձևակերպումը, իսկ կոնկրետ միջոցառումները կարող են տեղ գտնել կոլեկտիվ պայմանագրի գործողությունների ծրագրում:

Գ. Մակարյանի կողմից առաջարկվեց 2.9-րդ կետում «գենդերային» բառը փոխարինել «կանանց և տղամարդկանց» բառերով:

Նշված առաջարկությունն ընդունվեց Հանձնաժողովի նիստին ներկա անդամների կողմից:

Նախագծի 3-րդ բաժին.

Հանձնաժողովի անդամ Ն. Բալայանի կողմից հարց բարձրացվեց, թե արդյոք անհրաժեշտ է, որ Նախագծում մնա 3.3-րդ կետը, քանի որ, եթե խոսքը ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից մշակված որակավորումների շրջանակի մասին է, ապա այն արդեն մշակված և ներդրված է:

Այս դիտարկման կապակցությամբ Շ. Բարսեղյանի կողմից նշվեց, որ ներկայումս շրջանառության մեջ է դրված որակավորումների ազգային շրջանակի փոփոխությունների նախագիծը, ուստի այս առումով առաջարկվեց նշված կետը մնա Նախագծում, ուղղակի հետևյալ խմբագրությամբ.

«3.3. որակավորումների ազգային շրջանակի լրամշակմանը, կատարելագործմանը և ներդրմանը,»:

Ս. Հարությունյանի կողմից առաջարկվեց 3.8-րդ կետում կատարել լրացում և այն շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3.8. զբաղվածության տարեկան ծրագրերի մշակմանը և իրականացմանը, իրականացող ծրագրերի մոնիթորինգի և գնահատման համակարգի ներդրմանը,»:

Վերոնշյալ երկու առաջարկություններն էլ ընդունվեցին Հանձնաժողովի նիստին ներկա անդամների կողմից:

Նախագծի 6-րդ բաժին.

Է. Տարասյանի կողմից առաջարկվեց Նախագծում ամրագրել նաև թե ով է լինելու և ինչպես է ընտրվելու Հանձնաժողովի նախագահը:

Նշված առաջարկությունն ընդունվեց Հանձնաժողովի նիստին ներկա անդամների կողմից և առաջարկվեց Նախագծի 6-րդ բաժնում կատարել հետևյալ լրացումը.

«6.2. Հանձնաժողովի նախագահը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարն է:»

Շ. Մկրտչյանի կողմից առաջարկվեց 6.11-րդ կետում «Հանձնաժողովը» բառից հետո լրացնել «ձևավորման պահից» բառերով:

Առաջարկությունն ընդունվեց Հանձնաժողովի նիստին ներկա անդամների կողմից:

Նախագծի 7-րդ բաժին.

Ժ. Թորոսյանի կողմից առաջարկվեց 7.4-րդ կետում «Հանձնաժողովի անդամների» բառերը փոխարինել «Կողմերի ղեկավարների» բառերով:

Բ. Խառատյանի կողմից առաջարկվեց 7-րդ բաժինը լրացնել 7.8-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«7.8. Հանձնաժողովի որոշումները ուղարկում է ՀՀ վարչապետին:»:

Նշված առաջարկություններն ընդունվեցին Հանձնաժողովի կողմից:

Նախագծի 8-րդ բաժին.

Ժ. Թորոսյանի կողմից առաջարկվեց 8.2-րդ կետի 2-րդ նախադասությունը հանել:

Առաջարկությունն ընդունվեց Հանձնաժողովի նիստին ներկա անդամների կողմից:

Հանձնաժողովի նախագահի կողմից առաջարկվեց վերևում ներկայացված և Հանձնաժողովի կողմից ընդունված առաջարկություններով հանդերձ ընդունել Նախագիծը, որից հետո Նախագծի լրամշակված տարբերակը ներկայացնել նաև շահագրգիռ պետական մարմիններ կարծիքի՝ վերջիններիս ցանկը նախապես համաձայնեցնելով Հանձնաժողովի կողմերի հետ:

Օրակարգի հարցի վերաբերյալ Հանձնաժողովը որոշեց.

Հավանություն տալ Նախագծին՝ վերոնշյալ համաձայնեցված առաջարկություններով: Նախագիծը ևս մեկ անգամ դնել քննարկման Հանձնաժողովի նիստում և հաստատվելուց հետո ներկայացնել ստորագրման:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԱՍԱՏՐՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ **Ա. ՍԱՐԳՍՅԱՆ**